ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Սովետական գիտությունը մեծ կորուստ կրեց։ Ստեղծարար ուժերի ծաղկման շրջանում վախճանվեց խոշորագույն գիտնական, պետական և հասարակական ականավոր գործիչ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Սերգեյ Իվանովիչ Վավիլովը։

Ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի գիտական և հասարակական գործունեությունը առանձնապես լայնորեն ծավալվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլյուցիայից հետո։ Մոսկվայի համալսարանի պրոֆեսորի պոստում և ապա մի շարք ինստիտուտներում, որտեղ աշխատում էր Սերգեյ Իվանովիչը՝ իր աշակերտներով, նա զգալի աշխատանք է կատարել լյումինեսցենցիայի ընդգավառում, որը համաշխարհային համբավ բերեց նրան։

1945 թվականին Ս. Ի. Վավիլովն ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ։ Հմտորեն ղեկավարելով սովետական գիտնականների վիթխարի կոլեկտիվը, ակադեմիկոս Վավիլովը կարողացավ ճիշտ կազմակերպել սովետական գիտնականների ջանքերը՝ ընկեր Ստալինի առաջադրած խնդիրները կատարելու ոգով։

Ս. Ի. Վավիլովը եռանդուն կերպով պայքարում էր մեր Հայրենիքի բնակչության մեջ գիտական գիտելիքներ տարածելու համար։ Նա գլխավորում էր Գաղափարական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերությունը։ Որ հանրամատչելի գիտելիքներով նա օրինակ տվեց, թե ինչպես կարելի է հասկանալի դարձնել ամենարարդ թվացող գիտական գաղափարներն ու թեորիաները։

Ակադեմիկոս Վավիլովը, գլխավորելով միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաների գիտական գործունեության կոորդինացման խորհուրդը, զբաղվում էր միութենական ռեսպուբլիկաների յուրաքանչյուրում գիտության զարգացման հարցերով։

Ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովը, լինելով Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամը, միշտ ամենախոր հետաքրքրություն էր ցուցաբերում մեր ռեսպուբլիկայում կատարվող գիտական աշխատանքի արդյունքների նկատմամբ։

Հանձին Սերգեյ Իվանովիչի մեր Հայրենիքը կորցրեց առաջավոր գիտնականի, կոմունիստական հասարակության ակտիվ կառուցողի, հիանալի հայրենասերի, ամբողջ աշխարհում խաղաղության գործի կրքոտ մարտիկի։

Սովետական Հայաստանի գիտնականները, ինչպես և Սովետական Միության բոլոր գիտնականները, միշտ կհիշեն ակադեմիկոս Վավիլովին և կհետևեն նրա պայծառ օրինակին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի նախագահություն